ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԼԱՓԱՐՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Ալափարս համայնք, 19-րդ փող., թիվ 19,
հեռ.077.257533, էլ.փոստ alapars.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 հոկտեմբերի 2017 թվականի N 54-Ա

ԱԼԱՓԱՐՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ 19-ՐԴ ՓՈՂՈՑ, N 42 ՀԱՍՑԵՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ, 11-րդ և 13-րդ կետերի, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 75-րդ հոդվածի պահանջներով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ալափարսի համայնքի 19-րդ փողոց, N 42 հասցեի 0.0904 հեկտար մակերեսով տնամերձ հողամասի վրա ինքնակամ կառուցված բնակելի տունը՝ 205.33 քառակուսի մետր մակերեսով և շինությունները՝ 56.35 քառակուսի մետր մակերեսով կառուցված է 2001 թվականի մայիսի 15-ից առաջ՝ 1987 թվականին և հատկացվածից ավել օգտագործվող 104 քառակուսի մետր մակերեսով հողամասը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չի քաղաքաշինական նորմերների և կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, նկատի ունենալով, որ որակավորված մասնագետի կողմից ներկայացված չափագրման արդյունքում պարզված Ալափարսի համայնքի 19-րդ փողոց, N 42 հասցեի, համասեփականատերեր Գագիկ, Նարինե, Գարիկ, Թեհմինե և Կարեն Հայրոյաններին սեփականության իրավունքով պատկանող տնամերձ հողամասում 1987 թվականին ինքնակամ կառուցվել են բնակելի տուն՝ 205.33 քառակուսի մետր մակերեսով և շինություններ՝ 56.35 քառակուսի մետր մակերեսով՝ ***որոշում եմ.***

1.Ալափարսի համայնքի 19-րդ փողոց, N 42 հասցեի տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված բնակելի տունը՝ 205.33 քառակուսի մետր մակերեսով, շինությունները՝ 56.35 քառակուսի մետր մակերեսով և հատկացվածից ավել օգտագործվող 104 քառակուսի մետր մակերեսով հողամասը համարել օրինական:

2.Չեղյալ ճանաչել համայնքի ղեկավարի 2017 թվականի օգոստոսի 21-ի «Քաղաքացի Գագիկ Հայրոյանի կողմից Ալափարսի համայնքի 19-րդ փողոց, N 42 հասցեում ինքնակամ կառուցված բնակելի տան և շինությունների օրինականացման մասին» N 39-Ա որոշումը:

3.Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ — ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2017 թ. օգոստոսի 21
գ.Ալափարս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԼԱՓԱՐՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Ալափարս համայնք, 19-րդ փող., թիվ 19,
հեռ.077.257533, էլ.փոստ alapars.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 հոկտեմբերի 2017 թվականի N 55-Ա

ԱԼԱՓԱՐՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄՈՒՇԵ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՓՈՂՈՑ, N 5 ՀԱՍՑԵՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ, 11-րդ և 13-րդ կետերի պահանջներով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ալափարսի համայնքի Մուշե Կաթողիկոսի փողոց, N 5 հասցեի 0.031055 հեկտար մակերեսով տնամերձ հողամասի վրա ինքնակամ կառուցված բնակելի տունը՝ 74.7 քառակուսի մետր մակերեսով կառուցված է 2001 թվականի մայիսի 15-ից առաջ՝ 1948 թվականին և օժանդակ շինությունը՝ 43.51 քառակուսի մետր մակերեսով՝ կառուցված 2003 թվականին, չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չի քաղաքաշինական նորմերների և կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, նկատի ունենալով, որ որակավորված մասնագետի կողմից ներկայացված չափագրման արդյունքում պարզված Ալափարսի համայնքի Մուշե Կաթողիկոսի փողոց, N 5 հասցեի, համասեփականատերեր Մնացական Ադամյանին և Մանուշակ Տոլյանին սեփականության իրավունքով պատկանող տնամերձ հողամասում 1948 թվականին ինքնակամ կառուցվել է բնակելի տուն՝ 74.7 քառակուսի մետր մակերեսով, իսկ 2003 թվականին ինքնակամ կառուցվել է օժանդակ շինություն՝ 43.51 քառակուսի մետր մակերեսով՝ ***որոշում եմ.***

1.Ալափարսի համայնքի 14-րդ փողոց, N 32 հասցեի տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված բնակելի տունը՝ 74.7 քառակուսի մետր մակերեսով և օժանդակ շինությունը՝ 43.51 քառակուսի մետր մակերեսով, համարել օրինական:

2.Պարտավորեցնել համասեփականատերեր Մնացական Ադամյանին և Մանուշակ Տոլյանին 43.51 քառակուսի մետր օժանդակ շինության օրինականացման համար Ալափարսի համայնքի բյուջե վճարել 54 823 դրամ:

3.Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից և չեղյալ կճանաչվի 60-օրյա ժամկետում գումարը չվճարվելու դեպքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2017 թ. հոկտեմբերի 4
գ.Ալափարս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԼԱՓԱՐՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Ալափարս համայնք, 19-րդ փող., թիվ 19,
հեռ.077.257533, էլ.փոստ alapars.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 հոկտեմբերի 2017 թվականի N 56-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ՏԻԳՐԱՆ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 8-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 3-րդ մասի դրույթներով, ընդառաջելով քաղաքացի Տիգրան Ղազարյանի դիմումին, հիմք ընդունելով Ալափարսի համայնքի ավագանու 2017 թվականի սեպտեմբերի 27-ի N 28-Ա որոշումը՝ ***որոշում եմ.***

1.Չարենցավան քաղաքի 6-րդ թաղամաս, 28 շենք, 3 բնակարան հասցեի բնակիչ Տիգրան Ղազարյանին Ալափարսի համայնքի վարչական տարածքից օտարել 0.53155 հեկտար(կադաստրային ծածկագիր՝ 07-008-0232-0037) գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայր գործառնական նշանակության հողամաս 126 243 դրամ:

2.Քաղաքացի Տիգրան Ղազարյանի հետ կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր, որը ենթակա է պետական գրանցման:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

2017 թ. հոկտեմբերի 4
գ.Ալափարս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԼԱՓԱՐՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Ալափարս համայնք, 19-րդ փող., թիվ 19,
հեռ.077.257533, էլ.փոստ alapars.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 հոկտեմբերի 2017 թվականի N 57-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻ ԽՈՒՄԲ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2015 թվականի ապրիլի 14-ի N 19-Ա որոշմամբ հաստատված «Ալափարսի համայնքի ղեկավարի կամավոր լիազորությունների իրականացման և ֆինանսական միջոցների հատկացման կարգը» և համայնքի ղեկավարի 2015 թվականի ապրիլի 18-ի N 36-Ա որոշմամբ ստեղծված հանձնաժողովի եզրակացությունը, համայնքի մի խումբ անդամների սոցիալական պայմանների բարելավման նպատակով՝ ***որոշում եմ.***

1.Ալափարսի համայնքի 2017 թվականի բյուջեի 10-7-1 «Սոցիալական հատուկ արտոնություններ» գործառական դասակարգման 4729 «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից համայնքի մի խումբ անդամների տալ 250 000 դրամ դրամական օգնություն՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

2017 թ. հոկտեմբերի 5
գ.Ալափարս

Հավելված
Ալափարսի համայնքի ղեկավարի
2017 թվականի հոկտեմբերի 5-ի
N 57-Ա որոշման

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

Հ/Հ	Ազգանուն, անուն, հայրանուն	Անձը հաստատող փաստաթղթի համարը	Հանրային համարանիշը	Գումարը (դրամ)
1	Աղաջանյան Ռոզա Գեղամի	003559374	5312330132	30 000
2	Հակոբյան Հասմիկ Գրիգորի	AN0286349	7514550186	30 000
3	Միլիտոնյան Ջուլիետա Պարսամի	AM0468882	6010540682	30 000
4	Մկրտչյան Պողոս Ռաֆիկի	007160666	2811800697	40 000
5	Նազարյան Կարինե Մեխակի	AM0910266	5902510082	25 000
6	Նիկոլյան Դուխիկ Նահապետի	AN0548936	5107397328	25 000
7	Պողոսյան Սերիկ Պարույրի	AN0297848	7007560202	30 000
8	Սահակյան Վահե Սմբատի	AH0632655	3308900050	40 000
Ընդամենը				250 000

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ